ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 մայիսի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

66
(3097)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՐՁՈՒՄ Է ՀԱՅՀՈՅՆՔՈՎ ՏԵՂ ԱՄՐԱԳՐԵԼ 2026-Ի ԸՆՏՐԱՑՈՒՅԱԿՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը, որ նեղացել էր ՔՊ-ից, քիչ էր մնում՝ կալանավորվեր, կրկին սկսել է ակտիվանալ: Նա Նիկոլ Փաշինյանի թիմում իր դիրքը հնարավորինս ուժեղացնելու, 2026 թվականին սպասվող ընտրություններում ընտրացուցակի անցողիկ տեղ գրավելու համար անձնազոհության է անգամ գնում՝ ԱԺ ամբիոնից հայհոյելով:

Թորոսյանը, հիշեցնենք, որպես վկա անցնում է կորոնավիրուսի կառավարման տարիների չարաշահումների քրեական գործերից մեկով: Չնայած դրան՝ իրավապահները չեն շտապում խորանալ նրա գործողություններում, քանի որ այս պահին չկա քաղաքական նպատակահարմարություն:

Իրավապահ համակարգը շարունակում է լռություն պահպանել, եւ այդ ֆոնին հանրության շրջանում կրկին առաջանում են արդարացի հարցեր՝ արդյո՞ք «ՔՊական լինելու մանդատը» նշանակում է «անձեռնմխելիություն»:

Նկատելի է նաեւ, որ քաղաքական սեզոնի ակտիվացմանը զուգահեռ, Արսեն Թորոսյանը փորձում է պահանջված լինել՝ ընդհուպ ԱԺ ամբիոնից հայհոյելով:

Մինչդեռ նրա հակավարկանիշը այնքան բարձր է, որ դժվար թե «մահվան նախարար»-ի որակում ստացած (Էդգար Ղազարյանի կողմից) անձի համար թափուր տեղ լինի ապագա մարտահրավերներում



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ներքին հարցում է անցկացրել՝ պարզելու, թե որքան ձայն կարող են հավաքել ուժերը, եթե այժմ անցկացվեն արտահերթ ընտրություններ: Աղբյուրների փոխանցմամբ՝ արդյունքները անհանգստացրել են կուսակցության ղեկավար կազմին. մասնավորապես, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հավաքած ցուցանիշն առավել բարձր է եղել, քան սպասվում էր: Հենց սրանով է պայմանավորված, որ իշխանության ներսում կտրուկ աճել է ընդդիմադիրների դեմ ագրեսիվ հռետորաբանությունը: Հարձակումները, ինչպես պնդում են «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները, համակարգվում են տարբեր մակարդակներում՝ պատգամավորներից մինչեւ պետական պաշտոնյաներ: Այդ շրջանակում է դիտարկվում նաեւ Աննա Հակոբյանի վերջին կոշտ եւ վիրավորական գրառումների ակտիվացումը ընդդիմախոսների հասցեին: Նշենք, որ հաջորդ շաբաթ մեկնարկում են ԱԺ հերթական քառօրյա նիստերը, որոնք ընթանալու են լարված մթնոլորտում: Իշխանությունների հիմնական թիրախը կրկին լինելու են նախկինները՝ մասնավորապես Ռոբերտ Քոչարյանն ու նրա ընտանիքը:

Հակակոռուպցիոն կոմիտեն գրոհ է սկսել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Կոմիտեի աշխատակիցները առաջիկայում մտնելու են բոլոր տեսչական մարմիններ, թաղապետարաններ, համայնքապետարաններ: Իսկ ահա պատճառը կաշառքի կոռուպցիոն գործընթացների մասին օպերատիվ տվյալներն են: Ասել է թե՝ առաջիկայում ձերբակալություններ են սպասվում, ու հուսանք, որ Կոմիտեի ձեռքերը կհասնեն խոշոր ձկներին, քանի որ դժվար թե վերոնշյալ կառույցների ղեկավարները տեղյակ չլինեն, թե ինչ գործընթացների մեջ են ներգրավված իրենց ենթակաները: Նշենք, որ երեկ քաղաքապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցներ էին ձերբակալվել կաշառքի քրեական վարույթի շրջանակում: Ավելի ուշ իրավապահները մտան քաղաքաշինության տեսչական մարմին ու ձերբակալություններ սկսեցին, որը եւս կապված էր կաշառքի քրեական վարույթին: Սա էլ դեռ քիչ չէր՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ՀՀ ՆԳՆ երկու աշխատակից է ձերբակալվել գնման գործընթացների վերաբերյալ կաշառք ստանալու մեղադրանքներով:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CPC ARMENIA

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Դոմուսի» հրդեհից 7 ամիս անց քրեական գործով չկա մեղադրյալ, չկա կասկածյալ: Այդպես էլ առեղծված է մնում, թե ում անգործության, կամ միգուցե շահագրգռվածության հետեւանքով «Դոմուսի» պահեստը մոխիր դարձավ: 800 միլիոն գույքի այրումը ո՞ւմ էր ձեռնտու, ու ի՞նչ եղավ իրականում. հարցեր, որոնք 7 ամիս անց չունեն պատասխան: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 7-ին՝ ուշ երեկոյան, ՀՀ քննչական կոմիտեն ոստիկանությունից ստացել է «Դոմուս» ՓԲԸ-ի հաղորդումը՝ Իսակովի պողոտայի 29/1 հասցեում գտնվող ընկերության պահեստային մասից հրդեհի բռնկման եւ խանութի այրվելու մասին, ինչով, ըստ հաղորդման, նախնական տվյալներով՝ ընկերությանը շուրջ 800 մլն դրամի գույքային վնաս է պատճառվել: Հաղորդման հիման վրա՝ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն՝ հրդեհի առաջացման պատճառները, պատճառված գույքային վնասի իրական չափերը, ինչպես նաեւ հակահրդեհային անվտանգության պահանջների պահպանվածության հանգամանքները պարզելու ուղղությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը դեպքից 7ամիս անց դիմեց ՀՀ քննչական կոմիտե հասկանալու կամար՝ կա՞ գործով մեղավոր անձ, կամ ի՞նչ է պարզել կոմիտեն: Ի պատասխան հայտնեցին՝ նախաքննությունը շարունակվում է: Ասել է թե՝ ո՛չ կասկածյալ կա, ո՛չ մեղադրյալ, ու ի վերջո դեռ չկա հստակ պատասխան՝ ինչի՞ց է սկսվել հրդեհը, մարդկային գործոն կա՞, թե՞ տեխնիկական խնդիրն է պատճառը:

ԼՌԵՑՆԵ՞Լ ԷԻՆ ՓՈՐՁՈՒՄ

«ԿԱՏԱՐՎԱԾԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է». ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գեւորգ Ստեփանյանի հետ:

-Պարոն Ստեփանյան, վերջերս Ձեր ընտանիքին պատկանող մեքենան հրկիզեցին: Դուք նշել էիք, որ անձնական թշնամության հարց չկա, եւ այդ ամենը քաղաքական հետապնդում է: Ի՞նչ ընթացքում է գործն այս պահին:

-Դեպքից արդեն 15 օր անցել է: Կատարվածը քաղաքական ոտնձգություն էր, որպեսզի մենք՝ «Մայր Հայաստան»-ի անդամներով, չբարձրաձայնենք ծախսվող միլիարդավոր դրամների մասին:

Դեպքից 15 օր անցել է, եւ ներքին գործերի նախարարությունում կա մեկ ձերբակալված, որին ընդհանրապես չեմ ճանաչում եւ չգիտեմ՝ ով է: Ես անձնական թշնամիներ չունեմ, եթե սա անձնական հողի վրա լիներ, ապա վաղուց բացահայտված կլիներ: Ես անձնական թշնամանք ու խնդիր չունեմ ոչ մեկի հետ: Այս ամենը քաղաքական է, եւ վերջ: Երկրորդ տարբերակ գոյություն չունի:

-Պարոն Ստեփանյան, Դուք այսպես եք պնդում, բայց Ձեր գործընկեր Անի Խաչատրյանը նշեց, որ Ձեր անձնական որակներից ելնելով՝ պարզ է դառնում, որ ինչ-որ մեկի հետ անձնական թշնամանք եք ունեցել, եւ բացառեց, որ այս ամենը քաղաքական հետապնդում է: Ինչպե՞ս կարծագանքեք:

-Ես նման գործընկեր չունեմ: Ես չեմ համարում, որ նա ինձ գործընկեր է: Եվ եթե իմ ու իր անձնական որակները չափենք՝ սարերի ու ձորերի տարբերություն կլինի: Նա դեռ պետք է շատ աշխատի եւ կյանքում, եւ աշխատանքում, որ կարողանա իմ որակներին մի քիչ հասնել: Ես եւ Ձեր նշած անձը ոչ մի առնչություն ու ընդհանուր բան չենք կարող երբեւիցէ ունենալ: Ես նրան ասելու ոչինչ չունեմ:

-Պարոն Ստեփանյան, հակակոռուպցիոն կոմիտեն մտել էր քաղաքապետարան, եւ կան ձերբակալվածներ: Գիտե՞ք, թե ովքեր են իրենք: Ունե՞ք կասկածներ:

-Ինձ հայտնի է մեկ բան, որ 2023 թվականից հետո, այս «պոզով-պոչով կոռուպցիոն կենդանին» մտել է քաղաքապետարան, եւ ոչ մի կերպ չեն կարողանում այս կենդանուն այստեղից հանել: Այո՛, մի քանի օր առաջ էլ Շենգավիթ վարչական շրջանում կոռուպցիոն սխեմաներով ձերբակալություններ եղան: Սիրելի՛ ժողովուրդ, ձեր վճարած հարկերից ու տուրքերից այս մարդիկ չեն կշտանում:

-Բայց ասում էին, որ «կոպեկ առ կոպեկ» վերադարձվելու է ժողովրդին ամեն ինչ, ու բացառվելու է կոռուպցիան: Մինչեւ այսօր էլ կոռուպցիան բացառում են:

-Սուտ են խոսում: Ես իրենց ոչ մի բառին չեմ հավատում: Նրանք ինչ ասում են՝ հակառակն են անում: Այդ մարդիկ կոռուպցիայի մեջ թաթախված են:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

3-6 ՏԱՐԻ ԱՋԱՏԱՋՐԿՈՒՄ

ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՊԱՏԺԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Ներկայումս, ցավոք, նկատվում է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից եւ վարժական հավաքներից խուսափելու դեպքերի աճ: Այս մասին պետահրավական հանձնաժողովի նիստին ասաց արդարադատության նախարարի տեղակալ Գեւորգ Քոչարյանը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի» հարցի քննարկման ժամանակ:

Նրա խոսքով՝ 2023 թվականի ընթացքում քրեական օրենսգրքի 461-րդ (պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափել) եւ 462-րդ (վարժական հավաքից խուսափել) հոդվածներով նախաձեռնվել է ընդհանուր 1,499 քրեական վարույթ, իսկ արդեն 2024 թվականի ընթացքում՝ ընդհանուր 1,779 քրեական վարույթ:

«Ընթացիկ տարվա վերաբերյալ վիճակագրություն դեռեւս չունենք, ցավոք սրտի: Սա վկայում է քրեական քաղաքականության վերանայման եւ հիշյալ արարքները կատարած անձանց նկատմամբ պատժողական ավելի խիստ քաղաքականություն վարելու անհրաժեշտության մասին: Նախագծով առաջարկվում է խստացնել քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի առաջին մասով եւ 462-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարքների կատարման համար նախատեսված քրեական պատասխանատվությունը: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է զինվորական ծառայությունից խուսափելու հոդվածում 461-րդ հոդվածում պատժաչափը երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկումը փոխարինել երեքից վեց տարի ժամկետով ազատազրկմամբ»,- ասաց փոխնախարարը:

Նա տեղեկացրեց, որ վարժական հավաքներից խուսափելու հոդվածում առաջարկվում է սանկցիայի տուգանք պատժատեսակի չափը ամսական եկամուտի նկատմամբ հաշվարկվող առավելագույնը 20-ապատիկի չափով բառերը փոխարինել 15-ապատիկից 30-ապատիկի չափով, իսկ ազատազրկման համար նախատեսված առավելագույնը երկու տարի ժամկետով փոխարինել մեկից երեք տարի ժամկետով բառերով:

«Գտնում ենք, որ նման փոփոխությունները կարող են նպաստել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից եւ վարժական հավաքներից խուսափելու դեպքերի նվազմանը: Բացի այդ, նախագծի ընդունման դեպքում քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի առաջին մասը միջին ծանրությունից կդառնա ծանր հանցագործություն, ինչը հնարավորություն կտա իրավապահ մարմիններին պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության կամ արված զորակոչից խուսափելու հանցակազմի հասարակ տեսակի դեպքում եւս գործադրել օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքով եւ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված օպերատիվ հետախուզական մի շարք միջոցառումներ եւ գաղտնի քննչական գործողություններ, ինչը ներկայումս հնարավոր չէ, քանի որ միջին ծանրության հանցակազմ է իրենց ներկայացնում», - ասաց նա:

ՀԱՆԳԱՄԱՆԱԼԻՑ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի՝ մայիսի 20-21-ը Հայաստան աշխատանքային այցի շրջանակում նախատեսվում են հանգամանալից բանակցություններ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ, զրույցներ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ: Շփումները կանցկացվեն ամենաբարձր մակարդակով, ձեռք բերված պայմանավորվածությունները զարգացնելու նպատակով, հայտնել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Օրակարգը ներառում է երկկողմ համագործակցության հարցերի լայն շրջանակի քննարկում, եվրասիական ինտեգրացիոն ասոցիացիաների շրջանակում փոխգործակցության եւ միջազգային հարթակներում, առաջին հերթին՝ ՄԱԿ-ում դիրքորոշումների համաձայնեցումը:

Արտաքին քաղաքականության գերատեսչությունների ղեկավարները մտքեր կփոխանակեն տարածաշրջանային անվտանգության հարցերի, այդ թվում՝ հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացների շուրջ: Նախատեսվում է 2025-2026 թվականների միջգերատեսչական խորհրդակցությունների պլանի ստորագրում:

ԱԼԻԵՎԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանն առայժմ չի ցանկանում, բայց, հավանաբար, կընդունի մեր պայմանները, քանի որ մենք ոչ մի արտասովոր պայման չենք առաջադրել». - այս մասին Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի հետ համատեղ մամուլի ասուլիսում հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Խաղաղության պայմանագրի ստորագրման համար երկու պայման է առաջադրվել», - ասել է նա՝ հիշեցնելով՝ որոնք են դրանք. Հայաստանը «պետք» է փոփոխի Սահմանադրությունը, իսկ ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է լուծարվի:

Նա հավելել է, որ Բաքուն խաղաղության բանակցությունների նախաձեռնողն է եւ խաղաղության պայմանագրի տեքստի հեղինակը:

«Եվ հենց այս տեքստն է այսօր ընդունել Հայաստանը՝ իհարկե, որոշակի փոփոխություններով», - ասել է Ալիեւը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՆԱՅՔ ԿՌԻՎ ԵՆ ՀՐԱՀՐԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մանիկ Մալխասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2023 թվականի մարտի 29-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, Էդիտա Մալխասյանի եւ Սոնա Մալխասյանի հետ, խմբի կազմում, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի վարչական շենքի 1-ին հարկում գտնվող նույն հիմնարկի պետի տեղակալ Հայկ Մովսիսյանի աշխատասենյակում հասարակության նկատմամբ անհարգալից, իսկ իրավական նորմերի նկատմամբ՝ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների հասցեին տեւական ժամանակ՝ շուրջ 20 րոպե, հնչեցրել են հայոհանքներ՝ խոչընդոտելով քրեակատարողական հիմնարկի բնականոն աշխատանքը: Մանիկ Մալխասյանը եւ Էդիտա Մալխասյան նախկինում դատապարտված են եղել:

ՆՌՆԱԿ՝ ԵԿՄ-Ի ԱՇԽԱՏԱԿՑԻ ՍԵՆՅԱԿՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ Բյուրեղավանում՝ ԵԿՄ-ի սենյակներից մեկում, տեղադրել են մարտական նռնակ, որը պետք է պայթեր: ArmLur.am-ը դեպքի վայրում էր եւ արձանագրել էր, որ իրավապահները տվյալ պահին դեպքի վայրում են: Նշենք, որ դեպքը տեղի էր ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 12:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում եւ նույն գլխավոր վարչության Կոտայքի մարզի քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Բյուրեղավան վարչական շրջանի ղեկավարի 2-րդ վարչական շենքում աշխատակիցներից մեկի աշխատասենյակում նռնակ են տեղադրել:

Մարտական նռնակը հայտնաբերվել է նշված վարչական շենքի՝ ժողովրդին հայտնի կոմունալի պետ Վոլոդյա Հայրապետյանի աշխատասենյակում, եւ հենց նա էլ հայտնաբերել է նռնակը, երբ ժամանել է աշխատանքի. աթոռը քաշել է, որպեսզի նստի եւ նկատել է նռնակը:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնում հաղորդում տված քաղաքացին հայտնել է, որ Աթենք-Երեւան չվերթի ինքնաթիռում իր ուսապարկից գողացել են 1250 եվրո: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից: պարզվել է, որ գողությունը կատարել է օտարերկրյա քաղաքացի 44-ամյա տղամարդը: Նա Արմավիրի մարզի Փարաքար գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժին: Անձնական խուզարկությամբ գողացված գումարը հայտնաբերվել է:

Օտարերկրացին ներկայացվել է քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԹԻՐԱԽՈՒՄ ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ Է

ՈՎՔԵՐ ԵՆ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԿԱՇԱՌՔԻ ԳՈՐԾՈՎ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին է մտել Հակակոռուպցիոն կոմիտեն եւ կան ձերբակալվածներ:

Ձերբակալությունները, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների տեղի են ունեցել կաշառքի գործի շրջանակում:

Ըստ էության՝ նախաքննական մարմինը մտել է 2 կառույցներ՝ Երեւանի քաղաքապետարան եւ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին:

Կոմիտեն հիմնավորումներ ունի, որ կառույցների պաշտոնյաները ներգրավված են կաշառքի գործի մեջ:

Հարկ է նշել, որ երեկ հայտնել էինք նաեւ, որ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցները վաղ առավոտյան այցելել էին քաղաքապետարան եւ, ArmLur.am-ի տեղեկություններով, կան ձերբակալվածներ:

ArmLur.am-ին Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնեցին, որ տեղեղությունը ճիշտ է:

«Ի պատասխան՝ հայտնում ենք, որ քաղաքապետարանում ապացուցողական եւ այլ վարութային գործողություններն իրականացվում են Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում: Կաշառք ստանալու մեղադրանքով ձերբակալվել է քաղաքապետարանի 2 պաշտոնատար անձ»,- փոխանցեցին Հակակոռուպցիոն կոմիտեից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽԻՍՏ ՊԱՏԻԺ ԿՍԱՀՄԱՆՎԻ

Նախատեսվում է տրանսպորտային միջոցների բաղադրիչ մասերի, սարքերի կամ սարքավորումների գողությունը դիտարկել որպես գողության հանցակազմի 2-րդ մաս, որի պարագայում այն կդիտարկվի որպես միջին ծանրության հանցանք՝ ոչ մեծ ծանրության հանցանքի փոխարեն: Այս մասին ասել է ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանը ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի՝ մայիսի 20-ի նիստում: Առաջին ընթերցմամբ քննարկվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

«Օրենքի նախագիծն ընդունվելուց հետո՝ հանցանք կատարած անձը կպատժվի տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»,- մանրամասն ներկայացնելով սահմանվող տուգանքները՝ ասել է Արմեն Մկրտչյանը:

Նա նշել է, որ օրենքի նախագծի ընդունումից հետո դատական պրակտիկայում առավել մեծ հնարավորություններ կստեղծվեն նշված հանցատեսակի քննության ընթացքում նոր հանցագործություններ կատարելը կանխելու նպատակով կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու համար:

Ըստ հիմնական զեկուցողի՝ վերջին հինգ տարում գողություններն ընդհանուր հանցագործությունների հանցակազմում նվազել են 19,5 տոկոսով: Այդուհանդերձ, տրանսպորտային միջոցներից կատարված գողությունների մասնաբաժինը, ըստ էության, չի փոփոխվել:

Առաջարկվող լրացումներով տրանսպորտային միջոցների բաղադրիչ մասերի, սարքերի կամ սարքավորումների գողությունների համար կսահմանվի ավելի խիստ պատիժ, որը կզսպի ներկայում լայն տարածում ստացած հանցատեսակի աճը:

Արմեն Մկրտչյանը պատասխանել է պատգամավորների հարցերին՝ ներկայացնելով պարզաբանումներ գողությունների բացահայտելիության քանակի նվազման վերաբերյալ:

Հարակից զեկուցող Տրդատ Սարգսյանը ներկայացրել է գլխադասային՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը նախագծի վերաբերյալ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին իր ելույթում անդրադարձել է միջուկային բանակցությունների թեմային:

«Խոսք եղավ միջուկային բանակցությունների մասին: Ես մի նկատառում ունեմ մյուս կողմի համար», - ասել է նա՝ ավելացնելով, որ ամերիկյան կողմը, որը ներգրավված է այս անուղղակի բանակցություններում, պետք է խուսափի անիմաստ հայտարարություններից:

«Հնչեցված խոսքերը, ինչպիսիք են՝ «Մենք չենք թույլ տա, որ Իրանն ուրանի հարստացում իրականացնի», ուղղակի անհեթեթություններ են: Իրանի Իսլամական Հանրապետությունում ոչ ոք չի սպասում ուրիշների թույլտվությանը:

Իսլամական Հանրապետությունն ունի իր սեփական քաղաքականությունն ու մեթոդները եւ շարունակելու է դրանք իրագործել ինքնուրույն», - շեշտել է Խամենեին:

«Հարմար պահի ես կբացատրեմ իրանցի ժողովրդին, թե ինչու են ամերիկացիներն ու իրենց արեւմտյան դաշնակիցները այդքան համառորեն փորձում կանգնեցնել Իրանում ուրանի հարստացումը: Ես հստակ կասեմ, թե որոնք են նրանց իրական մտադրությունները»:

«Մենք չենք կարծում, թե միջուկային բանակցությունները ԱՄՆ-ի հետ արդյունք կտան: Մենք չգիտենք՝ ինչ կլինի», - հայտարարել է Խամենեին:

Հիշեցնենք, որ ԱԳ նախարար Աբբաս Արաղչիի գլխավորությամբ կիրակի օրը Մասկատում անցկացվել էր բանակցությունների չորրորդ փուլը ամերիկյան պատվիրակության հետ: Ամերիկյան պատվիրակությունը գլխավորում էր ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Վիտքոֆը: Քննարկումների հիմնական թեմաներն են եղել Իրանի միջուկային ծրագիրը եւ պատժամիջոցների վերացումը՝ հնարավոր նոր համաձայնագրի միջոցով, որը կփոխարինի 2015 թվականի պատմական միջուկային գործարքին, որից ԱՄՆ-ն միակողմանիորեն դուրս էր եկել Դոնալդ Թրամփի նախագահության առաջին ժամկետում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀ ԷԻՆ ՓԱԿԵԼ

Երեկ լարված իրավիճակ է ստեղծվել Արագածոտնի մարզում: Երեւան-Գյումրի ավտոճանապարհի Ագարակավան, Կաքավաձոր, Դիան եւ Օթեւան գյուղերի բանկիչները, ի նշան բողոքի, փակել են ճանապարհը եւ պահանջում են հանդիպում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության՝ հանձինս ՏԿԵ նախարարի եւ նույն նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավարության հետ: Բնակիչները պահանջում են իրենց գյուղ մտնող նախկին ճանապարհը բացվի, քանի որ այն ավելի է հեշտացնում գյուղացիների ելումուտը գյուղից դեպի Երեւան-Գյումրի ճանապարհ, անգամ նշում էին որ գյուղում մի քանի անգամ մարդիկ շտապօգնության կարիք են ունեցել եւ եթե նախկինում շտապօգնությունը ժամանում էր բավականին օպերատիվ, ապա հիմա նոր բացված ճանապարհը, որը գյուղացիները նաեւ ողջունում են, դանդաղում է շտապօգնության, հրշեջ ավտոմեքենաների ժամանումը:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՆԱՀԻՏ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

ԳՈՐԾԸ ՄՏԱՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Անահիտ Նահապետի Խալաթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Գյումրի համայնքի 2025 թվականի մարտի 30-ին նշանակված ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի թեկնածու, ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ ընտրությունների կայացումը, ընտրության իրավունք ունեցող բնակչի կողմից ընտրությանը մասնակցելու, ինչպես նաև իր ներկայացրած կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկելու համար ընտրողների հավաքագրում ապահովելու դիմաց, որպես ընտրակաշառք, Կիմա Հայրապետյանին խոստացել է տալ 15.000 դրամ գումար, իսկ վերջինս ընդունել է ընտրակաշառք ստանալու խոստումը: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ նշանակելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 1951-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի փետրվարի 20-ից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում նշանակվել են ավագանու արտահերթ ընտրություններ, որի անցկացման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանվել է 2025 թվականի մարտի 30-ը:

Գյումրի համայնքի՝ Ղուկասյան 5-րդ շարքի 19-րդ տան բնակիչ Անահիտ Նահապետի Խալաթյանը, 2025 թվականի մարտի 10-ից հանդիսանալով հիշյալ ընտրություններին մասնակցող՝ «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի ավագանու թեկնածու եւ ընդգրկված լինելով դաշինքի՝ 34 հոգուց բաղկացած ընտրական ցուցակի 21-րդ հերթական համարի ներքո, 2025 թվականի մարտ ամսվա ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել Գյումրի համայքնի Գերցենի փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 3 տանը հաշվառված եւ բնակվող, Գյումրիի թիվ 31/39-րդ ընտրական տեղամասից ընտրելու իրավունք ունեցող Կիմա Հովհաննեսի Հայրապետյանի հետ՝ նրա կողմից ընտրությանը մասնակցելու, «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկելու, ինչպես նաեւ նույն դաշինքի օգտին քվեարկելու համար Կիմա Հայրապետյանի կողմից ընտրողներ ապահովելու վերաբերյալ, որի դիմաց, որպես ընտրակաշառք, խոստացել է Կիմա Հայրապետյանին ընտրություններից հետո տալ նրա բնակարանի ջրագծի կառուցման համար անհրաժեշտ 15.000 ՀՀ դրամ գումարը:

Կիմա Հայրապետյանը, ընդունելով վերը նշված նպատակով ընտրակաշառք ստանալու խոստումը, իր հերթին դիմել է իր շրջապատում գտնվող՝ Գյումրի համայնքի ՏԻՄ ընտրություններում ընտրելու իրավունք ունեցող մի շարք անձանց՝ մասնակցելու ընտրություններին եւ ընտրելու «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքին, ու այդ կապակցությամբ ձեռքբերած տվյալները փոխանցել Անահիտ Խալաթյանին, ինչպես նաեւ 2025 թվականի մարտի 30-ին միջոցներ է ձեռնարկել հիշյալ քաղաքացիների կողմից ընտրությանը մասնակցելու եւ «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկելու ուղղությամբ:

Կիմա Հայրապետյանի Խալաթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թվականի մարտի 30-ին նշանակված ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցելու եւ որպես թեկնածու առաջադրված «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկելու, ինչպես նաեւ հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու համար ընտրողների հավաքագրում ապահովելու դիմաց ընդունել է նշված դաշինքի ցուցակով առաջադրված ավագանու թեկնածու Անահիտ Խալաթյանի կողմից 15.000 դրամ որպես ընտրակաշառք տալու խոստումը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՇԱՆՈԹԸ ԽԱԲԵԼ Է ԴՊՐՈՑԱԿԱՆԻՆ

ԻՆՉ Է ՊԱՏՄԵԼ 9-ԱՄՅԱ ԱՂՋԻԿԸ

Մայիսի 17-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Երեւանում:

Ժամը 01:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արաբկիրի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Արաբկիր վարչական շրջանում գործող հիմնական դպրոցներից մեկից տուն գնալու ժամանակ Երեւանի բնակիչ 9-ամյա աղջկան է մոտեցել անհայտ քաղաքացին, ներկայացել որպես նրա հոր ընկեր, եւ ցանկություն հայտնել ուղեկցել տուն:

Երեխայի հայրը ոստիկաններին հայտնել է, որ երեխան չի հավատացել այդ տղամարդուն, եւ ճանապարհը շարունակելով՝ հեռացել է: Ոստիկանները ձեռնարկում են անհրաժեշտ օպերատիվ հետախուզական միջոցառումներ այդ տղամարդու ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի փաստով ոստիկանության Արաբկիրի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ

Շիրակի մարզի պարեկները, համագործակցելով Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողների հետ, ստացել են օպերատիվ տեղեկություններ, որ շենքերից մեկի շքամուտքի տարբեր հատվածներում մի քաղաքացի տեղադրել է թմրանյութի փաթեթներ:

Համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում մայիսի 15-ին՝ ժամը 19:35-ին, ապօրինի թմրանյութ ձեռք բերելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել 38-ամյա մի օտարերկրացի: Նրա վարած «ՋԻՊ» մակնիշի ավտոմեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

Տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 15 տարբեր փաթեթ՝ ընդհանուր մոտ 18 գրամ քաշով: Նա հայտնել է, որ հայտնաբերվածը «Մեֆեդրոն» տեսակի թմրանյութ է, որի մի մասը գնել է «Տելեգրամ» հավելվածի միջոցով՝ ընկերոջը փոխանցելու համար, մնացածը՝ գտել շքամուտքից: Կազմված փաստաթղթերն ու օտարերկրացին ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԴՐԱԽՏԻԿ ԳՅՈՒՂԻՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՈՂԱՑԵԼ

Համայնքային ոստիկանության Ճամբարակի բաժին մայիսի 13-ին Դրախտիկ գյուղի բնակիչը գողության մասին հաղորդում էր ներկայացրել: Տղամարդն իրավապահներին հայտնել էր, որ Դրախտիկ գյուղի իրեն պատկանող անասնագոմից գողացել են չորս գլուխ ոչխար, հինգ գլուխ գառ՝ պատճառելով մոտ 490.000 դրամի նյութական վնաս:

Ճամբարակի համայնքային ոստիկանները, օպերատիվ տվյալներն իրացնելով Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողների հետ պարզել են, որ գողությունը կատարել են Դրախտիկ գյուղի 31-ամյա ու Գավառ քաղաքի 30-ամյա բանկիչները, որոնք անասունները վաճառել են մի զուվունեցու:

31-ամյա եւ 30-ամյա երիտասարդները հայտնաբերվել եւ ներկայացվել են նախաքննական մարմին: Գողոնը հայտնաբերվել է: Կատարվում է նախաքննություն:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 142 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԵԿ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԾ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ ԵՆ ԿԻՐԱՌԵԼ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքից հայտնում են, որ Երեւանից ժամանած հարկային տեսուչները փոքր խանութների տերերի վերաբերյալ մեծ տուգանքների արձանագրություններ են կազմել: Իջեւանցիների բողոքների համաձայն՝ դեպք կա, երբ նորաբաց փոքր խանութում Երեւանից ժամանած պետական եկամուտների կոմիտեի 2 աշխատակից միտումնավոր, տուգանքներ կիրառելու նպատակով 1 րոպեի ընթացքում երկու տարբեր գյուղմթերք են գնել եւ 2 դեպքում էլ տուգանքի արձանագրություն գրել: Իջեւանցիները հայտնում են, որ փոքր տնտեսվարող կա, որի վերաբերյալ մոտ 700 հազար դրամ տուգանքի արձանագրություններ են ձեւակերպել: Երեւանից ժամանած ՊԵԿ աշխատակիցները սահմանամերձ Նոյեմբերյան քաղաքի խանութներում եւս տուգանքների արձանագրություններ են կազմել: Ըստ նոյեմբերյանցիների՝ տուգանքների գումարները կազմում են 250-300 հազար դրամ: Քաղաքի շինանյութերի խանութներից մեկի վերաբերյալ 40 միլիոն դրամի տուգանքի արձանագրություն են կազմել, ըստ երեւույթին՝ երկար ժամանակ հարկային օրենսդրության պահանջները խախտելու համար: Նոյեմբերյանում ասում են, որ Նիկոլ Փաշինյանը պետական բյուջեն «լցնելու» խնդիր ունի, ուստի ՊԵԿ-ի աշխատողները Երեւանից սահմանամերձ Նոյեմբերյան են հասել:

ՔԱՆԻ՞ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՈՒՆ ԿԱ

Ամիսներ առաջ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե Տավուշի մարզում քանի՞ վթարային տուն կա: Մարզպետարանից հայտնել էին, թե դրա համար ուսումնասիրություններ են հարկավոր: Մայիսի 5-ին մարզպետին հարցրել ենք՝ պարզեցի՞ք, թե Տավուշի մարզում քանի վթարային տուն կա, դրանք ո՞ր բնակավայրերում են, ի՞նչ աստիճանի վթարայինություն ունեն: Մարզպետարանից պատասխանել են. «Վթարային տների գույքագրման եւ տեխնիկական ուսումնասիրության պրոցես դեռ չի մեկնարկել»:

ԳԱՂՏՆԻ ԵՆ ՊԱՀՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ սահմանազատման գործընթացով Ադրբեջանին հանձնված տարածքների համար Կիրանց գյուղի քանի՞ հողամասի սեփականատիրոջ է պետական բյուջեից դրամական փոխհատուցում տրվել, ընդհանուր որքա՞ն գումար է հատկացվել այդ սեփականատերերին, ներկայումս այդ գործընթացը՝ գումարների հատկացումը դադարեցվա՞ծ է: Մարզպետարանիից պատասխանել են. «Հարցի վերաբերյալ հայտնում եմ, որ սահմանազատման գործընթացներն իրականացվում են փակ ընթացակարգով»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԱՐԱՔԱՐԻ ԲՆԱԿՉԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԸ՝ ԿՐԿԻՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

ՊԱՅԹԵՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՊԱՆՎԱԾԻ ԿԻՆՆ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ Է

2022 թվականի հունիսի 23-ին Փարաքարի բնակիչ, 36-ամյա Վարազդատ Բարոյանի մեքենայի մեջ ռումբ էին տեղադրել ու պայթեցրել:

ArmLur.am-ի խմբագրություն է դիմել վերջինիս կինը՝ Անժելա Մխիթարյանը, եւ փաստաբանը՝ Ինեսսա Պետրոսյանը, ովքեր մտահոգություն են հայտնել դատավոր Հակոբ Մանուկյանի գործողությունների վերաբերյալ ու դիմում են ներկայացրել ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին՝ պահանջելով հեռացնել դատավորին այդ քրեական գործի վարույթից:

Հիշեցնենք, որ 35-ամյա Վարազդատ Բարոյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, վերջինիս պատկանող «Վազ 2121 Նիվա» մակնիշի ավտոմեքենայի վրա նախօրոք տեղադրել էին պայթուցիկ սարք: 2022թ. հունիսի 23-ին՝ ժամը 11:05-ին, երբ 35-ամյա տղամարդը գտնվել էր իր ավտոմեքենայի մեջ, Փարաքար համայնքի Գետափի փողոցում, վերոնշյալ պայթուցիկ սարքը գործի էր դրվել եւ պայթել, որի հետեւանքով ստացած մարմնական վնասվածքներով վերջինս տեղափոխվել էր «Աստղիկ» բժշկական կենտրոն, որտեղ նույն օրը՝ ժամը 12:05-ին մահացել էր: Այս գործով դատարանի առաջ են կանգնել «Նորագավիթցի Ծուռ» մականվամբ Արթուր Ասատրյանը, «Թոխմախցի Յուրո» մականվամբ Յուրիկ Գրիգորյանը, Արման Բուղդարյանը եւ Արսեն Հայրապետյանը, Լեւոն Բաբայանը: Վերջիններս, ըստ նախաքննական մարմնի, վարույթով դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, Վարազդատ Բարոյանին սպանելու նպատակով, ապօրինի կերպով ձեռք են բերել շուրջ 100 գրամ տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութ պարունակող անկապապարավոր լիցքով ինքնաշեն պայթեցման սարք, որը պահել, իսկ 2022թ. հունիսի 23-ին ժամը 4-ի սահմաններում փոխադրել են Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Գետափի փողոց, ապա այն տեղադրել Վարազդատ Բարոյանի՝ «ՎԱԶ 21214» մակնիշի 35PM099 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջեւի ձախ նստատեղի հատվածի տակ՝ ձախ լանժերոնի հետեւի հատվածում, եւ այն էլեկտրադետոնատորի կիրառմամբ հեռակառավարման եղանակով գործադրելով՝ պայթյունի միջոցով, այլ անձանց /շատերի/ կյանքի համար վտանգավոր եղանակով, կատարել են Վարազդատ Բարոյանի սպանությունը՝ նրան ապօրինաբար դիտավորությամբ զրկել են կյանքից:

Ինչո՞ւ Վարազդատ Բարոյանի մեքենան պայթեցրին ու սպանեցին նրան....

ArmLur.am խմբագրությունը պատրաստ է լսել նաեւ մեղադրվող պաշտպաններին եւ հարազատներին, թե նրանք ինչ են մտածում սույն քրեական գործով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՎԱՏԻԿԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թրամփն ասել է, որ Վատիկանը պատրաստակամություն է հայտնել ընդունել Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ հակամարտությունը դադարեցնելու բանակցությունները: «Վատիկանը, ի դեմս Հռոմի պապի, հայտարարել է, որ իրենք շատ շահագրգռված կլինեն բանակցություններ վարել: Թող գործընթացը սկսվի», - ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հեռախոսազրույցից հետո Truth Social սոցիալական ցանցում:

ԱՄՆ ղեկավարի խոսքով՝ հրադադարի հաստատման եւ հակամարտությունը դադարեցնելու պայմանները կքննարկվեն անմիջականորեն կողմերի միջեւ: «Ռուսաստանն ու Ուկրաինան անհապաղ կսկսեն հրադադարի բանակցությունները եւ, որ ավելի կարեւոր է, պատերազմի ավարտի համար: Պայմանները կբանակցվեն երկու կողմերի միջեւ, ինչպես որ պետք է, քանի որ միայն նրանք գիտեն բանակցությունների մանրամասները, որոնք ոչ ոք չգիտի:

Ջրույցի տոնն ու ոգին գերազանց էր: Եթե դա այդպես չլիներ, ես այդպես կասեի հիմա, ոչ հետո: Ռուսաստանը ցանկանում է Միացյալ Նահանգների հետ լայնամասշտաբ առեւտրային հարաբերություններ ունենալ այս աղետալի «սպանդի» ավարտից հետո, եւ ես համաձայն եմ: Ռուսաստանը հսկայական հնարավորություն ունի ստեղծելու հսկայական թվով աշխատատեղեր եւ հարստություն: Նրա ներուժը անսահմանափակ է: Նմանապես, Ուկրաինան կարող է մեծ օգուտ քաղել առեւտրից, քանի որ նա վերակառուցում է իր երկիրը»,- հայտնել է Թրամփը:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒՑ

Մայիսի 17-ին Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժին հաղորդում է ստացվել, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի տարածքից գողություն է կատարվել: Նախնական տվյալներով՝ ընկերությանը պատճառվել էր հինգ միլիոն դրամի վնաս:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել են Գյումրի քաղաքի 33-ամյա երկու բնակիչ: Նրանք ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ ԵՆ ՍԿՍՎԵԼ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ֆինանսների սղության պատճառով կրճատելու է անձնակազմը, ստորաբաժանումների թիվը 76-ից իջնելու է 34-ի, հայտարարել է ԱՀԿ գլխավոր տնօրեն Թեդրոս Գեբրեյեսուսը՝ Առողջապահության գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի բացմանը:

Ավելի վաղ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հրամանագիր էր ստորագրել ԱՀԿ-ից Միացյալ Նահանգների դուրս գալու մասին՝ հիմնավորմամբ, որ կառույցն արդյունավետ չէ, քաղաքական ազդեցություն է կրում եւ ԱՄՆ-ից չափազանց մեծ ֆինանսներ է տանում:

«Մշակվել է նոր կառուցվածք՝ գործադիր ղեկավարների թիվը 14-ից կրճատվելու է 7-ի, իսկ ստորաբաժանումների թիվը՝76-ից 34-ի»,- ասել է ԱՀԿ ղեկավար Գեբրեյեսուսը՝ հավելելով, որ նվազեցվելու են նաեւ գնումների, ուղեւորությունների համար նախատեսված ծախսերը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԲՐՈՒՑԵԼԼՅՈԶԻ ԲՌՆԿՈՒՄ՝ ՉԿԱԼՈՎԿԱ ԳՅՈՒՂՈՒՄ

Սեւանի Չկալովկա գյուղում Բրուցելյոզի բռնկում է: Այս մասին հայտնել է Առողջության իրավունք ՀԿ-ի նախագահ Անուշ Պողոսյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Բրուցելլյոզը (հայտնի է նաեւ որպես Բրուցելլյոզ կամ Մալթայի տենդ) վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է Brucella տեսակի բակտերիաներով: Այն փոխանցվում է մարդկանց հիմնականում վարակված կենդանիներից կամ նրանց արտադրանքներից (կաթ, միս), ինչպես նաեւ ուղիղ շփման միջոցով՝ վարակված կենդանու հետ: Սա դասական դեպքն է, երբ երկրում անասնաբուժության վախճանի արդյունքում, որին միացել է առողջապահության վախճանը, տուժում են բնակիչները, այս դեպքում՝ մի ամբուղջ գյուղ:

Եվ դեռ հայտնի չէ՝ միսը եւ կաթնամթերքը որտեղ եւ ինչ քանակությամբ են վաճառվել, եւ քանի մարդ է հիվանդացել: Երբ խոսում էի Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման Ազգային Կենտրոնի անգործությունից եւ անտրամաբանական օպտիմալացումներից, կանխատեսում էի նմանատիպ դեպքերը....

Մնում է միայն բնակիչներին խորհուրդ տալ՝

Չօգտագործել հում կաթ կամ չպաստերիզացված կաթնամթերք,

Կրել պաշտպանիչ հագուստ կենդանիների հետ աշխատելիս,

Եթե ունեք բարձր ջերմություն (տենդ, հաճախ ալիքաձեւ՝ բարձրանում է, ապա ընկնում), քրտնարտադրություն (հատկապես գիշերային), հոգնածություն եւ թուլություն, հոդացավեր եւ մկանացավեր, գլխացավեր, քաշի կորուստ, ապա շտապ դիմեք բժշկական օգնության», - ամփոփել է Անուշ Պողոսյանը:

ԵՐԿԲԱՇԱՐԺ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 20-ին տեղական ժամանակով ժամը 10:11-ին (Գրինվիչի ժամանակով ժամը 06:11-ին) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է հյուսիսային լայնության 41.08^{o} եւ արեւելյան երկայնության 43.88^{o} աշխարհագրական կոորդինատներով Հայաստան-Վրաստան սահմանային գոտի՝ Բավրա գյուղից 8 կմ հարավ-արեւելք, օջախի 10 կմ խորությամբ՝ 2.9 մագնիտուդով երկրաշարժ:

Էպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 4 բալ: Երկրաշարժը զգացվել է Շիրակի մարզի Բավրա, Սարագյուղ եւ Աշոցք գյուղերում՝ 2-3 բալ ուժգնությամբ:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ԲԱՆԿԸ՝ ՈՐՊԵՍ ՈՍԿԵ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«Կոնվերս» բանկը միանում է Եվրո-Ասիական Կապիտալի Շուկաների Միության համաժողովին՝ որպես Ոսկե հովանավոր:

Համաժողովը կկայանա մայիսի 30-31-ին Երեւանում՝ միավորելով մոտ 200 մասնակցի 20-ից ավելի երկրների ֆոնդային բորսաներից, կենտրոնական դեպոզիտարիաներից, բանկերից, կարգավորող մարմիններից, ներդրումային ընկերություններից եւ միջազգային ֆինանսական հաստատություններից: Մասնակիցները հնարավորություն կունենան քննարկել կապիտալի շուկաներում վերջին միտումները, մարտահրավերները եւ ոլորտի նորարարությունները:

«Կոնվերս» բանկը համաժողովին կմասնակցի ներկայացուցչական մեծ կազմով, իսկ բանկի ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Զաքարյանը, որպես բանախոս, հանդես կգա «Tabadul. Նոր տարածաշրջանային առեւտրային համագործակցություն» պանելային քննարկմանը: Tabadul-ը բորսայական թվային հաբ է, որը հիմնված է շուկայի փոխադարձ հասանելիության մոդելի վրա: Այն անդամներին ընդգրկում է տարածաշրջանային եւ գլոբալ մակարդակներում թվային փոխանակման ցանցում՝նպատակ ունենալով զարգացնել համագործակցությունը եւ մեծացնել իրացվելիությունը մասնակցող շուկաներում:

««Կոնվերս» բանկը Հայաստանում առաջին ֆինանսական կառույցն է, որն անդամակցել է Tabadul-ին՝ ընդլայնելով երկկողմ միջազգային ներդրումների հնարավորությունները, այդ թվում՝ Մերձավոր արեւելյան երկրների հետ: Հաբի շնորհիվ հայ ներդրողները կարող են պարզեցված ընթացակարգերով ներդրումներ կատարել արտասահմանյան, իսկ արտաքին ներդրողները՝ հայաստանյան արժեթղթերում՝ նպաստելով երկրի տնտեսության զարգացմանը ու դիվերսիֆիկացնելով իրենց ներդրումային պորտֆելները: Ակնկալում ենք, որ ConFEAS 2025 համաժողովի շրջանակում ոչ միայն կքննարկենք ոլորտի զարգացման հեռանկարները, այլեւ կհաստատենք տարածաշրջանային նոր գործընկերային կապեր»,- ասել է Գրիգորի Զաքարյանը:

Նշենք, որ ConFEAS 2025-ին «Կոնվերս» բանկի ներդրումային եւ ֆինանսական դեպարտամենտի ներկայացուցիչները կմասնակցեն նաեւ B2B քննարկումներին՝ գործընկերային կապերի ընդլայնման եւ հաճախորդներին ընձեռվող հնարավորությունների զարգացման նպատակով:

ԱՆՑԱԿԵՏԻ ՉԲԱՑՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԿԴԻՄԵՆ ԿՏՐՈՒԿ ՔԱՅԼԵՐԻ

ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՐՍԸ ԴԵՌ ՓԱԿ Է

Լարսը շուրջ 1.5 ամիս է փակ է Ռուսաստան կամ Մերձբալթյան երկրներ ալկոհոլային խմիչքներ արտահանող հայկական ընկերությունների համար:

Օրեր առաջ մի խումբ կոնյակագործներ եւ բեռնափոխադրողներ հավաքվել էին Հայաստանում Վրաստանի դեսպանատան դիմաց եւ պահանջել հանդիպում դեսպանի հետ:

Ինչպես բողոքի ակցիայի մասնակիցներն էին նշել՝ Ռուսաստանի Դաշնության արտահանող իրենց ալկոհոլային խմիչքները՝ հիմնականում կոնյակը, տարանցիկ երկրում՝ Վրաստանում, ստուգումների է ենթարկվում, ինչը մինչ այդ չի եղել:

Դեռ պարզ չէ, թե ինչ է լինելու հետո, բայց դեսպանատան աշխատակիցները խոստացել են լուծում տալ հարցին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 06.06.2025 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի էսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ«հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ՀՀ, ք. Երեւան, Նոր-Նորք, Ն. Մառի փողոց նրբանցք, 6 շենք, 80հասցեում գտնվող 91,15 քմ բնակարան եւ 3,65 քմ ինքնակամ կառուցվածշինություն,
- Լոտի մեկնարկային գինը՝ 35500000 (երեսունհինգ միլիոնհինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտիձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),
- Լոտը գրավադրված է:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարիմուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու)աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող էաճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխանփոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտիընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ)տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ:Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելովստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչինտորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակայինծանուցումը: Բոլոր այլտեղեկությունների համար կարողեք զանգահարել ստորեւ նշվածհեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ՋՈՒԴԻ ԴԵՆՉԻ ԿԱՎԵ ՔԱՆԴԱԿԸ

90-ամյա Ջուդի Դենչը դարձել է Լոնդոնում բարեգործական արվեստի միջոցառման հերոսուհին. հայտնի թագավորական ֆանդակագործ Ֆրենսիս Սիգելմանը նրա դիմանկարային կիսանդրին ստեղծել է կավից՝ հանրության աչքի առաջ, հայտնում է Daily Mail-ը:

Միջոցառումը, որը տեղի է ունեցել երկուշաբթի օրը՝ դերասանուհու տարեդարձը եւ նրա ուշագրավ կարիերան նշելու համար, կարեւոր առաքելություն ուներ՝ միջոցներ հայթայթել եւ իրազեկել լիմֆեդեմայի մասին: Բոլոր նվիրատվությունները փոխանցվում են Սուրբ Գեւորգ հիվանդանոցի լիմֆեդեմայի հետազոտական հիմնադրամին:

Երեկոն նախաձեռնել էր Ջուդիի վաղեմի ընկերուհի եւ լուսանկարիչ Գեմմա Լեւինը, ով 15 տարի պայքարում է լիմֆեդեմայի դեմ: «Ջուդին իր արվեստի միջոցով աշխարհին շատ բան է տվել, եւ մենք ցանկանում էինք նրան փոխհատուցել՝ միաժամանակ աջակցելով մի գործի, որը հատկապես մոտ է իմ սրտին», - կիսվել է Ջեմման:

Ֆրենսիս Սիգելմանը, ով նախկինում աշխատել է Չարլզ թագավորի եւ Եղիսաբեթ II թագուհու քանդակների վրա, դիմանկարի մեծ մասն ավարտել է ընդամենը երկու ժամում՝ 200 հանդիսատեսի առջեւ: Աշխատանքը հետագայում կավարտվի եւ կձուլվի բրոնզից, ապա կվաճառվի, իսկ ամբողջ հասույթը կփոխանցվի հիմնադրամին:

«Սա իսկապես կախարդական գործընթաց է. աշխատանքը շատ արագ է, գրեթե խելագարության աստիճանի: Բայց այստեղ է, որ ծնվում է անհատականությունը»,-խոսելով իր մեթոդի մասին՝ ասում է Ֆրենսիսը:

Երեկոն արվեստի եւ բժշկության ներկայացուցիչներին միավորել էր Լոնդոնի «Քլարիջս» հյուրանոցում: Ջուդի Դենչն ինքը ակտիվ մասնակցություն ունեցավ միջոցառմանը՝ աջակցելով իր ընկերուհու նախաձեռնությանը:

Լիմֆեդեման քրոնիկ վիճակ է, որի դեպքում հյուսվածքները այտուցվում են, առավել հաճախ՝ ձեռքերի կամ ոտքերի մասում:

Սիգելմանն ասում է, որ իրեն հատկապես տպավորում են նման միջոցառումներին իրեն հանդիպած երիտասարդները եւ դեռահասները, ովքեր տառապում են այս հիվանդությամբ. «Այնքան դժվար էր տեսնե: Ես զգում էի, որ պետք է ինչ-որ բան անեմ»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼՈԿՈՄՈՏԻՎԸ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ԹԻԿՆԻԶՅԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՆԸ

Մոսկվայի «Լոկոմոտիվի» տնօրենների խորհրդի նախագահ Յուրի Նագորնիխը ՌՊԼ-ի 29-րդ տուրի ԲԿՄԱ-ի հետ դերբիում (2:2) թիմի ոչ-ոքիից հետո արձագանքել է ակումբի պաշտպան Նաիր Թիկնիզյանի հայտարարությանը:

«Մեզ համար դեռ ոչինչ չի ավարտվել»,- Նագորնիխի խոսքերն է մեջբերում Championat-ը:

ԲԿՄԱ-ի հետ խաղից հետո 26-ամյա պաշտպանը խոստովանեց, որ իրեն անտեսված է զգում ակումբում եւ մտադիր է խնդրել «Լոկոմոտիվին» բաց թողնել իրեն առաջիկա ամռանը:

Թիկնիզյանը ընդգրկված էր ԲԿՄԱ-ի դեմ խաղի հայտացուցակում, բայց ամբողջ խաղն անցկացրեց պահեստայինների նստարանին: 2025 թվականին միակ դեպքը, երբ Հայաստանի հավաքականի խաղացողը ՌՊԼ-ում անցկացրել է ամբողջական հանդիպում եղել է մարտի 7-ին՝ «Ախմատի» դեմ 20-րդ տուրի խաղում (1:1):

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՈՒԺԵՂԱՆԱԼ

«Բարսելոնան» ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ ամեն գնով պատրաստվում է ուժեղացնել հարձակման գիծը: Այս մասին հայտնում է Diario Sport-ը:

«Կապտանռնագույնները» բավականին հաջող արդյունքներ են գրանցում ներկայիս գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկի գլխավորությամբ, բայց ղեկավարությունը դեռեւս տեսնում է հարձակման գիծը ուժեղացնելու անհրաժեշտությունը:

Նշվում է, որ նոր եզրային հարձակվողի հետ պայմանագիր կնքելը կատալոնական գրանդի առաջնահերթ տրանսֆերային նպատակն է ամռանը: Այս դիրքը կամրապնդվի նույնիսկ եթե ակումբը չկարողանա որեւէ մեկին վաճառել:

ՈՐՏԵՂ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԿԱՐԻԵՐԱՆ

Լեւերկուզենի «Բայերի» գերմանացի կիսապաշտպան Ֆլորիան Վիրցը երկար մտորումներից հետո որոշել է, թե որտեղ է ցանկանում շարունակել կարիերան:

Լրագրող Սաշա Տավոլիերիի հաղորդմամբ՝ 22-ամյա կիսապաշտպանը որոշել է չհեռանալ Գերմանիայից եւ իր համար նոր ակումբ է ընտրել Մյունխենի «Բավարիան»: Կիսապաշտպանը իր ընտրության մասին տեղեկացրել է «Մանչեսթեր Սիթիին», որը նույնպես պայքարում էր խաղացողի համար: Անգլիական ակումբում արդեն սկսել են դիտարկել այլընտրանք՝ Դանի Օլմոյի տարբերակը «Բարսելոնայից»:

Ֆլորիանի ծառայություններով հետաքրքրված էին նաեւ Մադրիդի «Ռեալը» եւ «Լիվերպուլը», սակայն երիտասարդ խաղացողը նախընտրել է մնալ Գերմանիայում ու միանալ երկրի ամենահեղինակավոր ակումբին:

ԺԱՄԱՆՑ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԻՐ ՆՈՐ ՖԻԼՄԸ

Ռեժիսոր, պրոդյուսեր Ելենա Արշակյանն այս օրերին Կաննում է, որտեղ հնարավորություն է ստացել ներկայացնելու իր առաջիկա ֆիլմը, որը, նրա խոսքով, պատրաստ կլինի այս աշնանը: Ֆիլմը ներկայացնում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը եւ կոչվում է «Մի սպանիր»: Սցենարի շուրջ Ելենան այս անգամ եւս համագործակցել է Անահիտ Մխիթարյանի հետ:

«Կաննում հանդիպումներ ունեցա տարբեր կինոգործիչների հետ եւ ծանոթացա այն բոլոր փառատոներին, որոնց շրջանակում կներկայացվի «Մի սպանիր»-ը:

Այս ֆիլմն ինձ համար առանձնահատուկ է, որովհետեւ չափազանց ուժեղ ասելիք ունի, որը կարծում եմ կհասնի յուրաքանչյուրի սրտին եւ մտածելու տեղիք կտա: Ֆիլմը ներկայացնելու է հայկական իրականությունը, որտեղ երբեմն դեռ չծնված կյանքերին զրկում են ապրելու իրավունքից: Սեռը դառավճիռ չէ եւ մեծ օրհնություն է ընտանիքում ունենալ դուստր. հենց այս գիտակցությունն է, որ ցանկանում ենք արթնացնել յուրաքանչյուրի մոտ»,-ասել է Ելենա Արշակյանը: Նրա խոսքով՝ հասարակությունը եւ, հատկապես կանայք, բավականաչափ տեղեկացված չեն արհեստական ընդհատումների հետեւանքների մասին, թե՛ կնոջ առողջության, թե՛ սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:

«Հաճախ կանայք այդ որոշումն ինքնուրույն չեն կայացնում: Նրանք այդ քայլին են դիմում ընտանիքի անդամների ճնշումների ներքո: Ֆիլմը անդրադառնում է այս երեւույթի բոլոր կողմերին եւ խորքային ներկայացնում բացասական հետեւանքները»:

Արշակյանի նոր նախագիծը ՀՀ-ում Նիդեռլանդների դեսպանության հետ համատեղ աշխատանք է:

Նիդեռլանդների կառավարության առաջնահերթություններից է կանանց իրավունքները, սոցիալ-տնտեսական ինտեգրումը եւ հավասար իրավունքների հիմնահարցերը:

ՊԻԵՐՊԱՈԼՈ ՊԻՉՈԼԻՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է Balenciaga–Ի ՏՆՕՐԵՆ

Հայտնի իտալացի դիզայներ Պիերպաոլո Պիչոլին դարձել է ֆրանսիական Balenciaga բարձրակարգ նորաձեւության տան նոր ստեղծագործական տնօրենը: Նրա նշանակումը նորաձեւության աշխարհում տեղի ունեցող խոշոր վերադասավորումների մի մասն է եւ տեղի է ունենում վիճահարույց նախկին ստեղծագործական տնօրեն Դեմնայի հեռանալուց հետո, ով մարտին տեղափոխվել էր Gucci, հաղորդում է The Guardian-ը:

Դեմնայի ղեկավարությամբ Balenciaga-ն հայտնի դարձավ իր «մեմքոր» ոճով: Այն ներառում էր անսովոր եւ սադրիչ իրեր՝ սրբիչով կիսաշրջազգեստներից մինչեւ սուրճի բաժակների պայուսակներ: Այդ ամենը բուռն քննարկումներ էին առաջացնում սոցիալական ցանցերում: Valentino-ում իր նրբագեղ, կանացի եւ էլեգանտ ոճով հայտնի Պիչոլիի նշանակումը ազդարարում է տան համար այդ ուղղությունից հնարավոր հեռանալու մասին:

Balenciaga-ն, որը հիմնադրվել է Քրիստոբալ Balenciaga-ի կողմից 1919 թվականին, Kering խմբի մաս է կազմում, որը աշխարհի ամենամեծ շքեղ կոնգլոմերատներից մեկն է, որը նաեւ տիրապետում է այնպիսի ապրանքանիշերի, ինչպիսիք են Gucci-ն, Yves Saint Laurent-ը, Bottega Veneta-ն եւ Alexander McQueen-ը:

«Ես անհամբեր սպասում եմ Պիերպաոլոյի հետ Balenciaga-ում նոր դարաշրջանի մեկնարկին: Նրա ստեղծագործական տեսլականը կզարգանա, եւ նա կատարելապես կփոխանցի Քրիստոբալ Balenciaga-ի ժառանգությունը՝ հենվելով տան համարձակության, հարուստ պատմության եւ եզակի մշակույթի վրա», - ասել է Balenciaga-ի գործադիր տնօրեն Ջանֆրանկո Ջանանջելին:

● Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում հունիսի 1-ին տեղի կունենա «25 տարիների ոգեշնչում» սառցե շոուն: Տոմսերի արժեքը՝3000, 4000, 5000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ուխտ եմ արել Աստծո հետ, հետո զղջացել եմ, որովհետեւ չեմ պահել: Բազմաթիվ անգամներ խնդրել եմ, որ Աստված ուխտս չեղյալ համարի ու ինձ ների: Արդյոք կների՞ Աստված, արդյոք չեղյալ կհամարի՞ ուխտս:

Նաիրա Հովսեփյան (41 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեր Հիսուս Քրիստոսն ասում է, որ մեր «այո»-ն այո լինի եւ «ոչ»-ը՝ ոչ: Աստված գիտի մեր թույլ էությունը (հիշենք առաքյալների ուրացումները, ովքեր Հիսուսին վստահեցնում էին, որ միշտ Նրա կողքին կլինեն), հետեւաբար, երբ մենք մեր կյանքում սայթաքումներ ենք ունենում, Նա աստվածային սիրով եւ ներողամտությամբ է մոտենում մեզ, եթե մենք զղջում ենք եւ հայցում Տիրոջ ողորմածությունը: Սակայն ամեն բան չէ, որ որպես ուխտ պետք է խոստանալ Աստծուն: Աստված գիտի այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեզ, ուստի մեր կյանքն էլ պետք է անցնի Աստծուն միանգամայն վստահությամբ եւ հավատարմությամբ: Կա ուխտ՝ կնքված մեր եւ Աստծո միջեւ, դա մեր Տեր Հրսուս Քրիստոսի Սուրբ Արյամբ կնքված նոր ուխտն է: Աստված պահում է այդ ուխտը, որովհետեւ գիտի, որ մեզ անհրաժեշտ է փրկվել: Մենք էլ պետք է ամեն գնով պահենք Իր պատվիրանները՝ փրկությանն արժանանալու համար:

Օրհնությամբ՝ Տ. Սմբատ քահանա Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուխտը հավատքի արտահայտման ձեւ է բաղձանքի իրականացման նպատակով կրոն, երդում, որով հավատացյալը դիմում է Աստծուն:

Ջորավարները մարտից առաջ ուխտել են հաջողության դեպքում զոհեր մատուցել աստվածներին, արժեքավոր իրեր, զենքեր են ընծայաբերել տաճարներին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է հաշվարկվում հաշմանդամության կենսաթոշակը:

Դիանա Մելքոնյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դ. Մելքոնյանի հարցին ի պատասխան հայտնում ենք, որ սկսած 2014 թվականի հունվարի 1-ից՝ հաշվարկված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում՝

1) ֆունկցիոնալության խոր աստիճանի սահմանափակման համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով.

2) ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակման համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 20 տոկոսի չափով:

2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմում է համապատասխանաբար՝

1-ին խմբի համար՝ 8400 դրամ (21000ճ40%),

2-րդ խմբի համար՝ 4200 դրամով (21000ճ20%):

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ աշխատանքային ստաժում հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչեւ ազատելու օրն ընկած ժամանակահատվածներ, այլ գործունեության ժամանակահատվածներ, ինչպես նաեւ զինվորական ծառայության ժամանակահատվածները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Երեկ ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Շիրակի մարզում: Նույն մարզի բնակիչ 35-ամյա Սմբատ Մելքոնյանը իր վարած BMW մակնիշի ավտոմեքենայով դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց, բախվել բնակչի քարե պարսպին, ապա բետոնե էլեկտրասյանն ու գլխիվայր շրջվել:

Վարորդը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին, գիտակցության չգալով, մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 + 12+ 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 + 11+ 14
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 16 + 18
Գեղարքունիք	+ 2 + 4 + 11+ 14
Լոռի	- 3 + 2 + 15 + 18
Տավուշ	+ 1 + 5 + 18 + 22
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 + 14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 + 15 + 18

Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 + 12+ 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19 + 20
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 + 16 + 19
ԼՂՀ	+ 3 + 5 + 13 + 17
Երեւան	+ 4 + 6 + 12 + 17

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.5.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*